ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 2

ՀՀ ԳՄ-ԳՀԽԾՁԲ-2022/01 ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՆԱՆՇՄԱՆ ՀԱՐՑՄԱՆ ՁԵՎՈՎ ԳՆՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՀԱՅՏԵՐԻ ԲԱՑՄԱՆ ՆԻՍՏԻ

ք.Գավառ «09» սեպտեմբերի 2022թ.

ժամը 12:00

Մասնակցում էին

Հանձնաժողովի անդամներ՝ Ա.Զոհրաբյան /նախագահ/,

Բացող անդամներ՝ Յու.Մուշեղյան, Ա.Մելքոնյան

Գնահատող անդամներ Գ.Խաչատրյան, Գ.Մելքոնյան

Քարտուղար՝ Ա.Բադեյան

ՀՀ ԳՄ-ԳՀԽԾՁԲ-2022/01 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի հայտերի բացման նիստի մասին.

1) Գնումների համակարգող /քարտուղար/ Արթուր Բադեյանը հայտնեց, որ Armeps էլեկտրոնային համակարգով հայտ է ներկայացրել 2 /երկու/ մասնակից՝

N	Մասնակցի անվանումը	Մասնակցի հասցեն
1	«Արս-Անն» ՍՊԸ	ՀՀ Գեղարքունիքի մարզ, ք. Գավառ, Զ. Անդրանիկի փողոց g.melkonyan77@mail.ru
2	«ՏԵԽՆՈ ՇԻՆ» ՍՊԸ	ՀՀ Գեղարքունիքի մարզ, գ. Գեղամավան, 2-րդ փողոց, 3-րդ նրբ texno.shin@mail.ru

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:

2) Ուսումնասիրելով ՀՀ ԳՄ-ԳՀԽԾՁԲ-2022/01 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի մասնակիցների կողմից ներկայացրած հայտերը պարզվեց, որ՝

«Արս-Անն» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը համապատասխանում է հրավերի պահանջներին:

«ՏԵԽՆՈ ՇԻՆ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտում բացակայում են հրավերի 2.4.1 կետով պահանջվող փաստաթղթերը՝ աշխատանքային ռեսուրսների առկայության և նախկինում կատարված նմանատիպ աշխատանքների վերաբերյալ:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:

Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշման 41-րդ կետը հանձնաժողովը **որոշեց՝**

1) Կասեցնել նիստը 1 /մեկ/ աշխատանքային օրով՝ «ՏԵԽՆՈ ՇԻՆ» ՍՊԸ-ին առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունները և էլեկտրոնային եղանակով գնահատող հանձնաժողովին ներկայացնել համապատասխան փաստաթղթերը:

Վերը նշված անհամապատասխանությունները շտկելու դեպքում մասնակցի ոչ գնային պայմանները կգնահատվեն հրավերով սահմանված կարգով, հակառակ դեպքում՝ ոչ գնային պայմանները կգնահատվեն զրո:
Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:

2) Գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել ս/թ սեպտեմբերի 14-ին ժամը 12:00-ին, ք. Գավառ, Կենտրոնական հրապարակ 7, Մարզպետարանի վարչական շենք, N 205 աշխատասենյակ հասցեում:
Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ		
նախագահ՝		Ա.Զոհրաբյան
անդամներ՝		Յու.Մուշեղյան
		Ա.Մելքոնյան
		Գ.Խաչատրյան
		Գ.Մելքոնյան
քարտուղար՝		Ա.Բաղեյան